ՏԵՂԵԿԱՆՔ

«ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 12. Փրկարար ուժերի գործունեության ղեկավարումը

1. Փրկարար ուժերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման ու փրկարարական աշխատանքների ղեկավարը:

2. Արտակարգ իրավիճակի վայր առաջինը մտած փրկարար ուժերի ղեկավարներն ստանձնում են արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման ու փրկարարական աշխատանքների ղեկավարի իրավասությունները՝ մինչև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններով նախատեսված ղեկավարի ժամանումը:

3. ~~Մինչև սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված փրկարար ուժերի ժամանումը արտակարգ իրավիճակի վայր մեկնած կամավոր փրկարարները ձեռնամուխ են լինում փրկարարական աշխատանքների իրականացմանը: Հիմնական ուժերի ժամանելուն պես կամավոր փրկարարներն անցնում են այդ ուժերի ենթակայության տակ և աշխատում են նրանց ղեկավարության ներքո:~~

~~Կամավոր փրկարարներն արտակարգ իրավիճակների վայր մեկնելու ժամանակ ձևակերպում են արձակուրդ՝ առանց աշխատավարձի պահպանման: Փրկարարական աշխատանքներ իրականացնելիս կամավոր փրկարարի առողջությանը, կյանքին հասցված վնասը հատուցվում է պետության կողմից, կամ նրան տրվում է ապահովագրական գումարը: Լիազոր մարմնի հայտով արտակարգ իրավիճակի վայր մեկնելու դեպքում կամավոր փրկարարն ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար: Օրացուցային տարվա ընթացքում մինչև 15 աշխատանքային օր ժամկետով արտակարգ իրավիճակի վայր մեկնելու դեպքում~~

~~կամավոր փրկարարին փոխհատուցում է պետությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:~~

3. Մինչև սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված փրկարար ուժերի ժամանումը՝ արտակարգ իրավիճակի վայր մեկնած կամավորները ձեռնամուխ են լինում փրկարարական աշխատանքների իրականացմանը: Հիմնական ուժերի ժամանելուն պես կամավորներն անցնում են այդ ուժերի ենթակայության տակ և կամավոր աշխատանքները կատարում՝ նրանց ղեկավարության ներքո: Սույն մասով նախատեսված կամավորի՝ կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, ինչպես նաև «Կամավոր աշխատանքի մասին» օրենքով սահմանված կարգով:

3.1. Այն անձինք, ովքեր աշխատանքային հարաբերությունների շրջանակներում աշխատավարձ են ստանում Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջեներից, սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով փրկարարական աշխատանքների իրականացմանը՝ որպես կամավոր, կարող են ներգրավվել նաև աշխատանքային ժամերին՝ գործատուի գրավոր համաձայնությամբ:

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքային ժամերին կատարված կամավոր աշխատանքի ժամանակահատվածում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց աշխատատեղը (պաշտոնը) և աշխատավարձն ամբողջությամբ պահպանվում են: